https://doi.org/10.46991/hc.2023.20.2.101

Activities of the Senekerimian Union and the Sebastia Reconstruction Union (1919-1923)

Lilit Makaryan
https://orcid.org/0009-0008-4696-1962
Associate Professor at YSU Chair of Armenian History, PhD in History
l.makaryan@ysu.am

Keywords: the Armenian Genocide, migrants, orphans, compatriotic unions, the Senekerimian Union, the Sebastia Reconstruction Union.

Compatriotic unions played a crucial role in satisfying the needs of their fellow countrymen, creating jobs, providing first aid to the survivors of the genocide, and overcoming the consequences of the Armenian Genocide as much as possible. These organizations were active not only in Western Armenia, in the Armenian cities of the Ottoman Empire, but also in other places abroad and in Soviet Armenia, where Armenians settled, especially as a result of the Armenian Genocide. Such a pro-Armenian mission was undertaken by the two major unions of Sebastian Armenians, the Senekerimian Union and the Sebastia Reconstruction Union, which cooperated in important undertakings to support compatriots. Moreover, they carried out an important mission to rescue Armenian orphans, liberate Armenian girls from harems, list the organizers of the genocide, deportation and looting of the Armenians of Sebastia, and appeal to the new authorities of Turkey to identify and punish the perpetrators. However, as the process revealed, the latter did not execute any punishment.

Սենեքերիմյան միության և Սեբաստիայի վերաշինության միության գործունեությունը (1919-1923թթ.)

Լիլիթ Մակարյան
ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Հիմնաբառեր: Հայոց ցեղասպանություն, գաղթական, որբ, հայրենակցական միություններ, Սենեքերիմյան միություն, Սեբաստիայի վերաշինության միություն:

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 101-111.
Received: 14.07.2023
Revised: 01.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Activities of the Senekerimian Union and the Sebastia Reconstruction Union (1919-1923)

Սենեքերիմյան միության և Սեբաստիայի վերաշինության միության գործունեությունը (1919-1923թթ.)

Հայկական հայրենակցական միությունները մեծ դերակատարում են ունեցել իրենց համերկրացիների կարիքները հոգալու, աշխատատեղեր ստեղծելու, բնաջնջումից փրկվածներին առաջին անհրաժեշտության օգնությունը ցուցաբերելու, Հայոց ցեղասպանության հետևանքները իրենց հնարավորության սահմաններում հաղթահարելու տեսանկյունից: Այդ կազմակերպությունները գործունեություն էին ծավալում ինչպես Արևմտյան Հայաստանում, Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում, այնպես էլ արտասահմանի այլ վայրերում և Խորհրդային Հայաստանում, ուր բնակություն են հաստատել հայերը՝ հատկապես Հայոց ցեղասպանության հետևանքով: Այդպիսի հայանպաստ առաքելություն էին ստանձնել սեբաստահայերի 2 խոշորագույն միությունները՝ Սենեքերիմյան միությունը և Սեբաստիայի վերաշինության միությունը, որոնք համագործակցում էին համերկրացիներին օժանդակելու կարևոր աշխատանքներում: Բացի այդ՝ կարևոր առաքելություն էին ստանձնել հայ որբերին փրկելու, հայ աղջիկներին հարեմներից ազատելու, Սեբաստիայի հայերի ցեղասպանության, տեղահանության ու թալանի կազմակերպիչներին ցուցակագրելու, ոճրագործներին հայտնաբերելու և պատժի ենթարկելու համար Թուրքիայի նոր իշխանություններին դիմելու գործում, սակայն ինչպես ընթացքը ցույց տվեց վերջիններիս կողմից նրանց պատիժը մնաց անարդյունք:

Деятельность Союза Сенекеримян и Союза Восстановления Себастии (1919-1923 гг.)

Лилит Макарян

кандидат исторических наук, доцент кафедры истории Армении ЕГУ

Ключевые слова: Геноцид армян, армянские земляческие союзы, беженец, сирота, Союз Сенекеримян, Союз восстановления Себастии.

Армянские землеческие союзы сыграли большую роль в удовлетворении нужд своих соотечественников, создании рабочих мест, оказании первой помощи спасшимся от истребления, в преодолении последствий Геноцида армян в пределах своих возможностей.

Эти организации осуществляли деятельность как в Западной Армении, в армянонаселенных городах Османской империи, так и в других местах за рубежом и в Советской Армении, куда переселились большинство армян, особенно в последствии геноцида. Такую проармянскую миссию взяли на себя два крупнейших Союза армян Себастии: Союз Сенекеримян и Союз восстановления Себастии, которые сотрудничали в важных работах по содействию соотечественникам.Кроме этого, была предпринята еще одна важная миссия в деле спасения армянских сирот; освобождения армянских девушек из гаремов; составления списков организаторов геноцида, выселения и ограбления армян Себастии; выявления преступников и привлечения к наказанию посредством

обращения к новым властям Турции. Однако, как показал процесс, их наказание со стороны последних осталось безрезультатным.

* * *

Ներածություն: Հայկական հայրենակցական միությունները մեծ դերակատարում են ունեցել իրենց համերկրացիների կարիքները հոգալու, աշխատատեղեր ստեղծելու, բնաջնջումից փրկվածներին առաջին անհրաժեշտության օգնությունը ցուցաբերելու, Հայոց ցեղասպանության հետևանքները իրենց հնարավորության սահմաններում հաղթահարելու տեսանկյունից: Այդ կազմակերպությունները գործունեություն էին ծավալում ինչպես Արևմտյան Հայաստանում, Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում, այնպես էլ արտասահմանի այլ վայրերում և Խորհրդային Հայաստանում: Այդպիսի հայապահպան առաքելություն էին ստանձնել սեբաստահայերի 2 խոշորագույն միությունները՝ Սենեքերիմյան միությունը և Սեբաստիայի վերաշինության միությունը, որոնք միմյանց փոխլրացնելով, արդյունավետ համագործակցում էին համերկրացիներին օժանդակելու կարևոր աշխատանքներում: Հոդվածում ներկայացրել ենք Կոստանդնուպոլսի Սենեքերիմյան միության և Նյու Յորքում հիմնադրված Սեբաստիայի վերաշինության միության 1919-1923թթ. Գործունեությունը: Հատկապես այս միությունները մեծ աշխատանք են տարել Սեբաստիայի հայերի տեղահանության և ցեղասպանության ոճրագործներին հայտնաբերելու, ցուցակագրելու և թուրքական նոր իշխանությունների դատին հանձնելու ուղղությամբ, սակայն նրանց իրավական պատասխանատվության հարցն այդպես էլ անկատար էր մնում: Շրջանառության մեջ դրված սփյուռքահայ մամուլի նյութերը և արխիվային փաստաթղթերը նոր լույս են սփռում Հայոց ցեղասպանության և հայ գաղթականության հիմնախնդիրների լուսաբանման վրա և հատկապես կարևոր են թուրք պաշտոնյաների կողմից Սեբաստիայի հայության բռնի տեղահանության, հայերի ունեզրկման, ապահովագրված նյութական միջոցների յուրացման փաստերը վեր հանելու և հատուցման իրավական փաթեթը համալրելու տեսանկյունից:

Սենեքերիմյան միության գործունեությունը (1919-1923 թթ.): Սենեքերիմյան միությունը ստեղծվել էր Կոստանդնուպոլսում՝ դեռևս 1846թ., և մի քանի անգամ վերակազմակերպվելով՝ Հայոց ցեղասպանությունից հետո էլ շարունակում էր իր գործունեությունը: Թուրքերի ցեղասպան ալիքը քանի դեռ Կոստանդնուպոլսում լիակատար իր սև գործը չէր հասցրել կատարել, այնտեղ հայկական որոշակի շրջանակներ, այդ թվում՝ Կոստանդնուպոլսում բնակվող սեբաստահայերը փորձ էին անում ինքնակազմակերպվել և աջակից դառնալ իրենց հայրենակիցներին և համերկրացիներին: Պոլսի սեբաստահայերի ջանքերով 1919թ. օգոստոսի 16-ին Սենեքերիմյան միության մասնաճյուղ է հիմնվում Սեբաստիայում՝ ցեղասպանությունից փրկված սեբաստահայերի խնդիրները տեղում լուծելու նպատակով: Մասնաճյուղի ընդհանուր ժողովը ատենապետ է ընտրում պրոֆեսոր Սողիկյանին, իսկ ատենադպիր՝ Պեկյանին: Նորընտիր վարչության կազմում ընդգրկվում են Կոզմոս Մեսիայանը՝ ատենապետ, Լևոն Պոտոսյանը՝ ատենադպիր, անդամներ՝ Վահան վարդապետ Գչուրյանը, Յ. Տեյիրմենճյանը, Ա. Տումանյանը, Մ. Շահինյանը, Զ. Համբարձումյանը, Լ. Մեծատուրյանը, Խ. Մումճյանը, Խ. Խանզետյանը, Լ. Բրուտյանը: Սենեքերիմյան միությունը 1919թ. օգոստոսի դրությամբ ուներ ընդհանուր 441 անդամ, որից 185 անդամը կենտրոնում էր՝ Կոստանդնուպոլիսում: Սենեքերիմյան միությունն այդ ընթացքում մասնաճյուղեր ուներ Սեբաստիայում (100 անդամ), Ֆիլիպեում (26 անդամ),

Վառնայում (60 անդամ), Ռուսչուգում (70 անդամ) և այլուր («Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6):

1919թ. հուլիսին Սեբաստիայի առաջնորդ Ս. վարդապետ Աճեմյանը միությանը տեղեկացնում է, որ Ս. Նշան վանքը ետ առնված է, սակայն նորոգության համար գումար չկա (Սեբաստիայի առաջնորդի այս հաղորդումը վկայում է այն մասին, որ ցեղասպանության տարիներին վերցրել են հայերից և ավերված է վանքը-Լ.Մ.): 1920թ. հունվարի 5-ին կրկին հոգևոր առաջնորդը տեղեկացնում է, որ վանքին պատկանող արտերը՝ պայմանագրային հիմունքներով, հանձնվել են ամերիկացիներին, որոնք էլ սկսել են մշակել [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6]:

Հայոց ցեղասպանության ոճրագործների անպատիժ լինելու հանգամանքն հաշվի առնելով՝ 1920թ. օգոստոսից Սենեքերիմյան միությունը սկսում է անուղղակի հետապնդել սեբաստացիների կոտորածների ենթարկողների հայտնաբերման և ձերբակալման նպատակ: Սակայն Սեբաստիայի առաջնորդարանից Հայոց պատրիարքարան հասած նամակից հասկացվում է, որ Սեբաստիայում հայերի դրությունը կվտանգվի, եթե Պոլսի մեջ թուրք ջարդարարներին իրենք ձերբակալեն: Ուստի այդ ամենը հաշվի առնելով՝ Սենեքերիմյան միությունը նախազգուշանալով և շրջահայացություն ցուցաբերելով՝ կազմում է Սեբաստիայի ջարդարարների ցանկը, նրանց մասին արձանագրում վկայությունները և որոշում է ջարդարարների ձերբակալություններն իրականացնել ազգային իշխանությունների կողմից (նկատի ունեն Թուրքիայի նոր իշխանություններին-Լ.Մ.): Ոճրագործ և բանտարկեալ «Քէլ Մուսթանթիքի» ազատ արձակումը կանխելու համար, որոշվում է նույնիսկ փաստաբան վարձել: Սենեքերիմյան միությունը Մալթա աքսորված Ղանիի (Սեբաստիայում Իթթիհատի պատասխանատու քարտուղարը), որ ամեն գիշեր չեթեապետների և չեթեների հետ էր, ազատ արձակվելուն դեմ ևս միջոցներ ձեռնարկեց: Սենեքերիմյանը միջոցներ էր ձեռնարկում նաև մյուս ջարդարարների ազատման դեմ՝ Ֆազըլ Բերգի, Մեհմեդ Ռիֆաթի և ուրիշների: Ֆազըլ Բերգը Իթթիհաթի զինվորական բժիշկներից էր՝ Չանկրիի երեսփոխանը, Պոլսից էր ուղարկվել Սեբաստիա՝ մասնավոր հրահանգներով՝ սեբաստահայերին բնաջնջելու նպատակով: Մեհմեդ Ռիֆաթը Սեբաստիայի ոստիկան-մյուդիրն էր, ով ձերբակալել էր Սեբաստիայի 5000 հայ տղամարդկանց, որից հետո նրանց տները խուզարկել էր տվել և թալանել[«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6]:

Անգլիայի Բարձր կոմիսարությունը 1920թ. նոյեմբերի 8-ի թվակիր գրությամբ հայտնում էր, որ 10.30-ից մինչև 12.30 վկաները (ցեղասպանության ժամանակ թուրքական տեղական իշխանությունների վայրագությունների ականատեսները-Լ.Մ) կարող են ներկայանալ [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7]: Չնայած անգլիացիների կողմից ինչ-որ գործընթացներ էին սկսվել՝ քննելու թուրք պաշտոնյաների այլանդակությունները, սակայն դրանց հանդեպ չկար վստահություն: Ինչպես «Ալիս» ամսագրում է նշվում. «Այդ ամբողջ փաստաթղթերը, ուրիշ հազարաւորներու հետ, հաւանաբար կը կքնանան այժմ, Անգլիոյ Ֆարիյն օֆիսի դարակներուն մէջ, որպէս զի անգլիացիք միայն իրենց շահերուն ծառայեցնեն, երբ պէտք զգան» [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7]:

1915թ. Սեբաստիայի հայերի ցեղասպանության գլխավոր ոճրագործներից էր նաև Սեբաստիայի վալի Մուամմեր փաշան, ով Սեբաստիայի 300 հազար հայերի տեղահանության և սպանությունների կարգադիր ժողովների նախագահողն էր եղել և իր պաշտոնավարման ընթացքում՝ 1915թ. ապրիլի 13-ից 1917թ. Մայիսն ընկած ժամանակահատվածում ավերել էր Սեբաստիան: Տեղահանության օրերին սեբաստահայերին կոտորել էին, իսկ հայ զինվորականներին սպանել տալուց հետո հայերի ազգային սեփականությունները կողոպտել, քայքայել, հայ մանուկների մի մասը իսլամացրել, իսկ աղջիկներին հափշտակել էին: 1919թ. անգլիացիները ոճրագործին Մալթա էին աքսորել, իսկ 1922թ. նրան ազատ էին արձակել: Վերջինս էլ վերադարձել էր Թուրքիա և նշանակվել Կեսարիայում քեմալական մյութեսերիֆ: Ոճրագործ Մուամմեր փաշան վարակվում է թոքախտով և 1928թ. Կեսարիայի գյուղերից մեկում կնքում է մահկանացուն: Սեբաստիայի ջարդարարների թվում էր նաև Մուամմերի գործակից հարյուրապետ Քելեշ բեյը, որը Սեբաստիայի տղամարդկանց խմբային ջարդերի վարիչն էր: Նա ևս կնքել էր մահկանացուն թոքախտից՝ 1919թ. [«Ալիս», թիւ 6, Նիւ Եորք, 1929թ., մարտ-ապրիլ-մայիս, էջ 35]:

Սենեքերիմյան միությունն իր կարևոր առաքելությունը կատարեց ցեղասպանությունից մազապուրծ և գաղթական հայրենակիցների կարիքները հոգալու ուղղությամբ: Սեբաստահայերի ցավերը մասամբ կարողացան մեղմել, բազմաթիվ հայ որբերի թուրքերի ձեռքից ազատեցին, հայ աղջիկների հարեմներից փրկեցին և հայ տարագիրների ազատեցին մուրալուց՝ աշխատատեղեր բացելով: Այդ աշխատանքներում լծվել էին և մեծ ավանդ ունեցան Ղևոնդ Տեր-Աբրահամյանը, Ռուբեն Գոչիկյանը, Հակոբ Պուչագճյանը, տիկին Ա. Վարուժանը, Հարություն Սերայտարյանը, ատենապետ Արմենակ Խորիկյանը, Հովհ. Չատրճյանը: Սեբաստացի տարագիր հայրենակիցների համար Սենեքերիմյան միությունը 1919թ. Կոստանդնուպոլսում բացել էր արհեստանոց: Միությունը ապահովագրել էր նաև 1000 ոսկի: Սենեքերիմյան միությունը հրատարակում էր նաև «Սեբաստիա» շաբաթաթերթը՝ մինչև 1922թ-ի քեմալական փոթորիկները [«Ալիս», թիւ 1, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8]:

Քեմալականները իշխանության գալով՝ կարճ ժամանակ անց վերադարձան աբդուլհամիդյան և երիտթուրքական ցեղասպան քաղաքականությանը: Մազապուրծ և տարագրությունից ետ վերադարձած հայերն այս անգամ դարձան թուրքական նոր իշխանությունների զոհը: Մասնավորապես 1922թ. փետրվարի 7-ին Սեբաստիայից տեղեկացնում են, որ Սեբաստիայի առաջնորդը մի տան մեջ չեզոքացված է (սպանված-ԼՄ), իսկ 15 հոգին տարագրվել են, բայց հետո կրկին վերադարձել են: 1922թ. Կոստանդնուպոլսում Սենեքերիմյան միության վարչական նոր ընտրություն է տեղի ունենում, հետևյալ կազմով՝ Ղևոնդ Տեր-Աբրահամյան (ատենապետ), Հարություն Սերայտարյան (ատենադպիր), Հովհ. Չատրճյան (գանձապահ), Մահտեսի Մանուկ Գաբիկյան, ով հետո հրաժարվում է, Ռուբեն Գոչիկյան, Մեսիա Կյուզերյան, Կարապետ Սեմերճյան, Վարազդատ Ակինյան, Սարգիս Այվազյան, Աբրահամ Տեր-Գրիգորյան, Միրիջան Ֆիչենքճյան, Միհրան Գաֆեսճյան [«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8): Սակայն նոր վարչությունը 4 ամսվա կյանք է ունենում: Հատկապես կարևոր էր Կոստանդնուպոլսում 1922թ. օգոստոսի 25-ին միության կողմից կազմակերպված դաշտահանդեսը, որին մասնակցում են 400 սեբաստացիներ [«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8]: Բայց քեմալական շարժումը հետզհետե տարածվելով՝ նոր վարչության

գործունեությունը դժվարացնում է: Անելանելի դրությունից դուրս գալու համար 1922թ. սեպտեմբերի 8-ին Պոլսի արհեստանոցի կարասիները փոխադրվում են փակ շուկա՝ ամսական 8 ոսկի վարձքով: Մ. Քեմալի իշխանությունը հայերի համար խաղաղ գոյակցելու որևէ շանս չէր թողել, իսկ կյանքի սպառնալիքի պայմաններում այլընտրանքը՝ արտագաղթն էր: 1922թ. Սենեքերիմյան միության բոլոր թղթերը և արձանագրությունները Հարություն Սերայտարյանի կողմից ուղարկվում են Նյու Յորք՝ Սեբաստիայի վերաշինության միության կենտրոնական վարչություն: 1923թ.-ից Սենեքերիմյան միությունը լիովին դադարում է գործել [«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8]: Հետաքրքիր է, որ Սեբաստիայի վերաշինության միության 1922թ. կանոնագրում նշված է, որ երբ միությունը լուծարվի, նրա բոլոր դրամները և գույքերը պետք է ուղարկվեին Սենեքերիմյան միության կենտրոնին [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 1377, թ. 5շրջ]:

1924թ. հուլիսի 7-ին Սենեքերիմյան միությունը 4-րդ անգամ վերակազմակերպվում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում, որի նպատակը հայրենակիցներին նյութապես և բարոյապես օժանդակություն ցուցաբերելն էր: Մարսելում գործում էր Սենեքերիմյան և 1924թ. օգոստոսի 30-ին Փարիզում Սեբաստահայերի նահանգային միությունը, որոնց հարցում նախատեսված էր, որ 1925թ. պետք է միանային ԱՄՆ-ի Սեբաստիայի վերաշինության միության հետ: [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8]:

Սեբաստիայի վերաշինության միության գործունեությունը 1919-1923թթ.: Դեռևս 1897թ. նոյեմբերի 14-ին Նյու Յորքում 33 սեբաստացիների կողմից հիմնվել էր Ազգային որբանոցի և հիվանդանոցի օժանդակ ընկերությունը՝ նպատակ ունենալով օգնել Սեբաստիայի ազգային որբանոցին և հիվանդանոցին: Տարիներ շարունակ գործում էր այդ միությունը՝ իր կողքին ունենալով հետագայում Սեբաստիայի աղքատախնամի և Լուսաբերի օժանդակ մարմինները, ինչպես նաև Սեբաստահայ տիկնաց բարեսիրացը: Մինչև 1914թ. համաշխարհային պատերազմի օրերն այդ միությունները շարունակել են իրենց գործունեությունը: Նախքան Սեբաստիայի վերաշինության միության ստեղծելը՝ ԱՄՆ-ի զանազան քաղաքներում գործել են սեբաստահայ միություններ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ օժանդակ մարմիններից էլ Նյու Յորքում կազմվում է Միացյալ մարմին, իսկ զինադադարից հետո հիմք է դրվում Սեբաստիայի վերաշինության միությանը: Հիմնադիր առաջին պատգամավորական ժողովը գումարվում է Նյու Յորքում՝ 1919թ ապրիլի 5-6-ին, իսկ «Վերաշինություն» անունը թելադրված էր Դիտրոյթից: Սեբաստիայի վերաշինության միությունն արդեն 1919թ. օգոստոսի 5-ին ճանաչվում է Նյու Յորքի նահանգային կառավարության կողմից: [«Շինարար», թիւ 4, Նիւ Եորք 1931, էջ 30]:

1919թ. դրությամբ Սեբաստիայի վերաշինության միությունն ուներ 22 մասնաճյուղ, որից 16-ը՝ ԱՄՆ-ում, 2-ը՝ Հունաստանում, 2-ը՝ Սիրիայում, 2-ը՝ Բուլղարիայում [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 5]: Միության նպատակն էր օգնել ինչպես Սեբաստիայում, այնպես էլ այլ վայրերում գտնվող հայ տարագիրներին և որբերին: Սեբաստիայի վերաշինության միությունը նյութական օգնությունների հատկացումներից զատ, նաև աշխատատեղեր էր ստեղծում գաղթական հայրենակիցների համար՝ հենց տարագրման վայրերում: Մասնավորապես Հալեպում ստեղծել էր գորգի գործարան, ուր աշխատում էին 80-90 հայ գաղթականներ: Իրենց պատվավոր աշխատանքով պահվում էին 200-250 հոգի: Սակայն այդ գործարանը տնտեսական ճգնաժամի

պատճառով 1931թ. փակվում է [«Շինարար», թիւ 4, 1931, էջ 30]: Սեբաստիայի վերաշինության միությունը 1920թ. ապրիլի 4-ին Նյու Յորքում գումարում է իր պատգամավորական 2-րդ համագումարը, որի ընթացքում ընդունվում է կարևոր որոշում՝ որդեգրելով որևէ կուսակցական հոսանքներին չենթարկվելու սկզբունքը [«Շինարար», թիւ 4, 1931, էջ 30]:

Սեբաստիայի վերաշինության միությունը մամուլի միջոցով էր նաև արտասահմանի հայությանը տեղեկացնում հայրենիքում ծավալվող իրադարձությունների և սեբաստահայերի ծանր դրության մասին: 1920թ.-ից հրատարակում էր «Ալիս» պաշտոնաթերթը, որի վարիչ-խմբագիրն էր Մեսրոպ Պաճագյանը, իսկ հասույթը փոխանցում էին սեբաստահայերի կարիքներիին:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Հայոց ցեղասպանությունից և զանգվածային տեղահանություններից հետո Արևմտյան Հայաստանի շատ բնակավայրերում հայության բեկորներ էին փրկվել, որոշ տարագիրներ վերադարձել էին: Նրանք Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո Թուրքիայի նոր իշխանությունների օրոք փորձում էին ստացած հարվածից ոտքի կանգնել և շարունակել ապրել իրենց բնօրրանում: Մասնավորապես 1921թ. հոկտեմբերի 8-ին Սեբաստիայից տեղեկացնում են, որ այնտեղ դեռևս 5000 հայեր են գտնվում: Տղամարդիկ զինվորագրված են արդեն: Բոլոր որբանոցների հոգատարությունը հանձնված է ամերիկացիներին: Որբերի թիվը 1200 է [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7]: Ապաստարանում պատսպարված են 150 կանայք և չափահաս աղջիկներ, որոնք պատրաստում էին զանազան գործվածքներ: Միս Կրեֆմի մոտ թողնված գոհարեղենների և գումարների հաշիվները կարող էին կարգադրել միայն Փաթրիչը և տիկին Ռայսը: Ցեղասպանությունը վերապրողների համար փշոտ հարց էր հայերի ապահովագրությունների ճակատագիրը: Մասնավորապես Սեբաստիայի Ս. Նշան վանքը ապահովագրված էր 3000 ոսկով [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7-8]: Սակայն օգտվելով համաշխարհային պատերազմից և ցեղասպանված ու տարագրված հայության ծանր դրությունից՝ հայերի ունեցվածքը յուրացնելու թուրքական իշխանությունների գործելաոճից ետ չէին մնում նաև արտասահմանյան ապահովագրական ընկերությունները: Այդ կապակցությամբ «Ալիս» ամսագրում հռետորական հարց է հնչեցվում. «Երբ թուրքը հայուն «լքեալ» եւ ոչ լքեալ մալը կուտէ, ինճու օտար ապահովագրական ընկերութիւնները նոյնը չընեին» [«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս), էջ 7-8]:

1922թ. ապրիլի 1-2-ը Նյու Յորքում՝ հայ առաքելական Ս. Գ. Լուսավորիչ եկեղեցու սրահում կայանում է Սեբաստիայի վերաշինաց միության 4-րդ պատգամավորական ժողովը, որը բացում է Կենտրոնական վարչության ատենապետ Պարսամ Պարսամյանը: Վերջինս վարչության գործունեության մասին նշելով՝ հատկապես կարևորում է, որ Ellis կղզի հասնող գաղթականներին օգնելու համար հատկացվելիք 1000 դոլարը նույնությամբ շարունակում է մնալ: Ատենապետը նշում է, որ Թավրիզից մի խումբ հայեր ևս դիմել են օգնության խնդրանքով, որոնցից մի քանիսն էին Սեբաստիա քաղաքից, ուստի այս դիմողներիի անվանացանկը փոխանցվել է Սեբաստիայի զանազան կազմակերպություններին, սակայն որևէ գործուն քայլեր չեն ձեռնարկվել [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 2]: Պ. Պարսամյանը նշում է, որ Կենտրոնական վարչությունը ձեռնարկել է մասնաճյուղեր բացել Ֆրեզնոյում և Պրաքթոնում, իսկ Թրոյում արդեն բացվել է: Նոր կազմվելիք Կենտրոնական վարչությանը իրավասություն է տրվում դրամական առաքումները կատարել

«Near East Relief» ընկերության միջոցով, իսկ այն վայրերում, ուր նրանք չունեին ներկայացուցիչներ, առաքումները պետք է արվեին տեղական պատկան մարմինների միջոցով:

Պատգամավորական ժողովը փակ քվեարկությամբ կատարում է դիվանի ընտրություն: Ա ատենապետ է ընտրվում Մ. Անանիկյանը, Բ ատենապետ՝ Ս. Աբգարյանը, Ա ատենադպիր՝ Հ. Մեսիայանը, Բ ատենադպիր՝ Ա. Ճիվելեկյանը [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 3]: Պատգամավորական ժողովին մասնակցում էին միության 8 մասնաճյուղերից պատգամավորներ: Մասնավորապես՝ Նյու Յորքի արական մասնաճյուղից՝ Ս. Աբգարյանը, Հրանտ Մեսիայանը, Նյու Յորքի տիկնանց մասնաճյուղից՝ Մարնոս Մերկեռյանը, Բոստոնի մասնաճյուղից՝ Տիգրան Խորիկյանը և Արամ Զառան, Դիտրոյթի արական մասնաճյուղից՝ Արտաշես Ճիվելեկյանը, Դիտրոյթի կանանց մասնաճյուղից՝ Հրանդ Գ. Ղազարյանը, Չիկագոյի մասնաճյուղից Մարտիրոս Անանիկյանը, Սիրաքուզայի մասնաճյուղից Նշան Կարապետյանը, Սփրինկֆիլդի մասնաճյուղից՝ Սերովբե Պուչաքճյանը, Կենտրոնական վարչությունից՝ Նազելի Պալպալյանը: Բինգհեմթնի մասնաճյուղից բացատրական նամակ էր ստացվել պատգամավոր չուղարկելու վերաբերյալ, բայց միևնույն ժամանակ առաջարկություններ էր արված նամակում [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 3]:

Պատգամավորական ժողովը իրավասություն է տալիս Կենտրոնական վարչությանը Կարապետ Գաբիկյանի «Եղեռնապատում»-ը գիրքը հրատարակել միության հաշվին: Պատգամավորական ժողովը նաև հանձնարարում է բանակցել գործող հայկական զանազան հայրենակցական կազմակերպությունների անվանումների մեջ գտնված տարբերությունների շուրջ, ինչպես նաև Պոլսի Սենեքերիմյան միության և Հալեպի մարմնի հետ, վերջինին խնդրել տեղի արհեստանոցի անունը նույնացնել Սեբաստիայի վերաշինության միության անվան հետ: Միաժամանակ նկատի առնելով մասնաճյուղերի հարցը և Նյու Յորքի մասնաճյուղում տեղի ունեցած բաժանումը միացնելու նկատառումով՝ որոշվեց հրավիրել նաև Ամերիկահայ սեբաստացիների միության վարչության անդամներին՝ Կարապետ Փայելյանին, Ոսկան Խանփաշյանին, Արմենակ Մաղաքյանին, Վարդանուշ Ապաճյանին, Գրիգոր Յարտմյանին, Անդրանիկ Տեսթեյանին, Նշան Թաշճյանին [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 4]:

4-րդ պատգամավորական ժողովը որոշում է կազմել հանձնախում՝ 3 հոգի նոր ընտրվելիք կենտրոնական վարչությունից և 3 հոգի էլ Նյու Յորքի մասնաճյուղից, սկսել բանակցություններ, որպեսզի Ամերիկահայ սեբաստացիների միության և Սեբաստիայի վերաշինության միության Նյու Յորքի մասնաճյուղի հետ մեկ ընդհանուր միություն կազմվի: Ապրիլի 2-ի նիստում ընտրվում է Կենտրոնական վարչություն՝ Արամ Զարդարյանը՝ Ա ատենապետ, Պարսամ Պարսամյանը՝ Բ ատենապետ, Հրանդ Ղազարյանը՝ Ա ատենադպիր, Հրանդ Մեսիայանը՝ Բ. Ատենադպիր, Ոսկան Պոյաճյանը՝ հաշվապահ, Նազելի Պալպալյանը՝ խորհրդական [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 6 և շրջ.]:

1923թ. ապրիլի 21-22-ին Նյու Յորքի Ս. Լուսավորիչ եկեղեցու սրահում գումարվում է Սեբաստիայի վերաշինության միության 5-րդ պատգամավորական ժողովը: Նիստը բացում է կենտրոնական վարչության ատենապետ Արամ Զարդարյանը: Պատգամավորական ժողովին մասնակցում էին Նյու Յորքի արական մասնաճյուղից Սարգիս Աբգարյանը, Անդրեաս Զոթեանը, Բոստոնի մասնաճյուղից Քերովբե Չամյանը, Հմայակ Հապեշյանը, Չիկագոյից՝ Գարեգին Սյունին, Սփրինկֆիլտից՝ Սուրեն Միքայելյանը, Բինգեմթնի մասնաճյուղից՝ Համազասպ Բարունակյանը,

կենտրոնական վարչությունից՝ Հրանտ Մեսեյանը: Ժողովին մասնակցում էին նաև Սեբաստիայի քույր կազմակերպություններից ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Ամերիկահայ սեբաստացիների միությունից Քերովբե Պողոսյանը և Հարություն Պալիոզյանը, Սեբաստացիների երիտասարդական «Այգ» միությունից՝ Զարեհ Գաբիկյանը և Վարդան Պաճագյանը: Դիտրոյթի կանանց մասնաճյուղից, Բեյրութի, Բրիջփորթի Նյու Յորքի տիկնանց միությունից ներկայացուցիչներ չէին մասնակցում [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թթ. 1, 2 և շրջ.]: Ժողովն ընտրում է իր դիվանը՝ Հրաչյա Գամպուրյան՝ Ա ատենապետ, Հմայակ Հապեշյան՝ Բ ատենապետ. Համազասպ Բարունակյան՝ Ա ատենադպիր, Հրանտ Մեսիայան՝ Բ ատենադպիր: Հաշվեքննիչ հանձնախմբի կազմում ընդգրկվում են Հմայակ Հապեշյանը, Գարեգին Սյունին և Քերովբե Չամյանը: Հարցերի դասավորման և կանոնագրության քննության հանձնախմբում ընտրվեցին՝ Սարգիս Աբգարյանը, Սուրեն Միքայելյանը և Հրանտ Մեսիայանը: Պատգանավորական ժողովը նկատի առնելով Նյու Յորքի մասնաճյուղի բաժանման հարցը և Ամերիկահայ սեբաստացիների միության ներկայացրած չորս պայմանները՝ երկուստեք հավանությամբ դժվարությունները հարթելով հասավ բաղձալի միավորմանը [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թ. 3 շրջ.]: Պատգամավորական ժողովը կարևորեց Բալկանյան թերակղզու զանազան վայրերում գտնվող սեբաստացիներին օգնելու հարցը, որի համար մասնաճյուղ բացել, ինչպես նաև Ռուսաստան համազգային գաղթականական հոսանքի հանդեպ միության բռնելիք դիրքը, սեբաստացի երիտասարդների մտավորական զարգացմանը սատարելու հարցը: Ժողովը կարևորեց միության «Ալիս» թերթի բաժանորդագրության ընդլայնումը և տարածումը: Կարևորվեց Հալեպի ազգային որբանոցում գտնվող սեբաստացի որբերի հոգատարության հարցը, եթե առաջիկա սեպտեմբերին Near East Relief-ը, իր պայմանաժամանկը լրանալուց հետո չստանձնի որբանոցի հոգատարությունը: Պատգամավորական ժողովը որոշում է, որ սեբաստահայերի զանազան կազմակերպությունները, որոնք այս կամ այն պատճառով դադարեցրել են իրենց գործունեությունը, հրավեր ուղարկել, որ իրենց հաշիվները փոխադրեն Սեբաստիայի վերաշինության միությանը, քանի որ ամերիկահայության մեջ սեբաստահայերի ամենահեղինակավոր կազմակերպությունն է: Նաև քննարկվեց միության անունը դարձել Սենեքերիմյան միություն, բայց թեր և դեմ վիճաբանություններից հետո որոշվեց միության անունը նույնը թողնել: Հալեպի մասնաճյուղին հանձնարարվեց որբերին պետք եղած հոգատարությունը կազմակերպել՝ որդեգրության միջոցով հարցը լուծել կամ որբանոց բացելով: Ոսկան Պոյաճյանը զեկուցում է գորգերի որակի և ներկերի հետ կապված խնդիրների մասին: Հաշվեքննիչ հանձնախմբի զեկույցի համաձայն տարեկան մուտք էր եղել 11,555,11 դոլար, իսկ ելք՝ 7,061.74 դոլար: Այդ գումարների մեջ մտնում էր նախորդ կենտրոնական վարչությունից ստացված 5,101.16 դոլարը, մյուս մասը հավաքագրվել էր մասնաճյուղերից, վաճառված գորգերի, թաշկինակների հասույթից և այլն: Պատգամավորական ժողովն ընտրում է կենտրոնական վարչություն: Նախորդ վարչությունը վերընտրվում է, պակասող անդամների փոխարեն ընտրվեցին Նշան Մաղաքյանը և Հարություն Պալիոզյանը [ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թթ. 4-7]:

Սեբասիայի վերաշինության միության հաշվեկշիռը՝ արտահայտված դոլարներով, 1919-1923 թթ. հետևյալն է. [«Ալիս», թիւ 6, Նիւ Եորք, 1929թ., մարտ-ապրիլ-մայիս, էջ 7]

Ժամանակահատված	Մուտք	Ելք	Մնացորդ
1919թ. մայիս-1920թ. մայիս	16046.96	14113.47	1933.49
1920թ. մայիս-1921թ. մայիս	7922.37	1793.29	6129.09
1921թ. մայիս-1922թ. մայիս	8343.83	3242.67	5101.16
1922թ. մայիս-1923թ. մայիս	11555.11	70.61.74	4493.37

Եզրակացություն: Սենեքերիմյան միության և Սեբաստիայի վերաշինության միության գլխավոր նպատակը եղել է սեբաստացի համերկրացիների կրթական, բարոյական և նյութական սատարումը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը: Սենեքերիմյն միությունը կարևոր առաքելություն ստանձնեց սեբաստացիների տեղահանության և ցեղասպանության ոճրագործներին հայտնաբերելու, ցուցակագրելու և իրավական պատասխանատվության ներկայացնելու գործում: Սեբաստիայի վերաշինության միությունը 1920-ականների վերջին արդեն որդեգրեց սեբաստացի հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում բնակեցնելու քաղաքականություն, որի ջանքերով և ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ՀՕԿ-ի և Խորհրդային Հայաստանի կառավարության աջակցությամբ՝ հիմնադրվեց Նոր Սեբաստիա ավանը:

Գրականության ցանկ

«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 6:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7:
«Ալիս», թիւ 6, Նիւ Եորք, 1929թ., մարտ-ապրիլ-մայիս, էջ 35
«Ալիս»,, թիւ 1, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8:
«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8:
«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8:
«Ալիս», թիւ 1,Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 1377, թ. 5շրջ:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 8:
«Շինարար»,թիւ 4, Նիւ Եորք 1931, էջ 30:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 5:
«Շինարար», թիւ 4, Նիւ Եորք, 1931, էջ 30:
«Շինարար», թիւ 4, Նիւ Եորք, 1931, էջ 30:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7-8:
«Ալիս», թիւ 1, Նիւ Եորք, 1929թ., հունիս-հուլիս, էջ 7-8:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 2

ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 3
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 3
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 4:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 981, թ. 6 և շրջ.:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թթ. 1, 2 և շրջ.:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թ. 3 շրջ.:
ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 985, թթ. 4-7: